Արձանագրություն N 3

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/102» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

06.04.2017թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Կարապետյան /գնահատող/, Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Գների նվազեցման բանակցություններին անցկացման մասին

(Տ. Իգիթյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ համաձայն ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/102» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին ծանուցված բոլոր մասնակիցներից մասնակցել է միայն «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն:

1.2 Բանակցությունների վարման համար հանձնաժողովի կողմից սահմանվել է 5 (հինգ) րոպե ժամանակահատված, որի ընթացքում մասնակցի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ (Հավելված 1-ը կցվում է) և ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Բաց ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների մասին

(Տ. Իգիթյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/102» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ են ճանաչվել.

-1-ին չափաբաժնի մասով «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն,

-2-րդ չափաբաժնի մասով «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն,

-3-րդ չափաբաժնի մասով «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 06.04.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 06.04.2017թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Բաց ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 12.04.2017թ. ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ե. Կարապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան

Հավելված N 1.3

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/102» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի թիվ 3 արձանագրության

ք. Երևան

06 ապրիլի 2017թ.
Ժամը 11:30

<<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ 3-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկների նվազեցման նպատակով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ իրականացված բանակցությունների ընթացքում՝ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՆ /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՆՎԱԶԵՑՎԱԾ ԳԻՆ /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Ստորագրություն
68 000	49900	

«Ս3 Վի Ս2 Գրուպ» ՍՊԸ
Մասնակցի անվանումը (անունը) (պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)